Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
մայիսի 5-ի N 555 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2007-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՀԱՇՎԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 22-ի N 336-Ա որոշման 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում 2007-2015 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրի իրականացման գործընթացի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1-ի N 1289-Ա որոշման 3-րդ կետի համաձայն ստեղծված գանձապետական հատուկ հաշվի (այսուհետ՝ գանձապետական հատուկ հաշիվ) տնօրինման պայմանները:

2. Գանձապետական հատուկ հաշվին կուտակված ֆինանսական միջոցների տնօրինման իրավունքը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:

3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարը գանձապետական հատուկ հաշվի վրա կուտակված ֆինանսական միջոցների և դրանց օգտագործման մասին յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ մինչև հաջորդ ամսվա 20-ը հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

4. Գանձապետական հատուկ հաշվի վրա կուտակված ֆինանսական միջոցների ծախսման ուղղությունների և չափաքանակների վերաբերյալ տեղեկատվությունը, կիսամյակային կտրվածքով, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

5. Գանձապետական հատուկ հաշվի վրա կուտակված ֆինանսական միջոցները կարող են օգտագործվել հետևյալ ուղղություններով՝

1) տավարաբուծության զարգացման նպատակով արտերկրից համաշխարհային լավագույն՝ կաթնատու և կաթնամսատու ցեղերի տոհմային երինջների, ինչպես նաև մսատու ցեղերի արտադրող ցուլերի գնման և գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ և անասնապահությամբ զբաղվող առևտրային ընկերություններին տարաժամկետ վճարման պայմանով հատկացման համար.

2) նախկինում ներկրված կենդանիների վերարտադրության արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ստացված սերնդից լավագույն կենդանիների գնման և տարաժամկետ վճարման պայմանով գյուղացիական տնտեսություններին՝ տոհմային երինջների, իսկ գյուղական համայնքներին (համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի համաձայն)՝ տոհմային արտադրող ցուլերի հատկացման համար.

3) Հայաստանի Հանրապետությունում ընտրասերման արդյունքում ստացված տավարի կովկասյան գորշ ցեղի տոհմային երինջների գնման և տարաժամկետ վճարման պայմանով գյուղացիական տնտեսություններին հատկացնելու համար.

4) կովերի արհեստական սերմնավորման գործընթացը խթանելու նպատակով:

6. Միջգերատեսչական հանձնաժողովը սույն կարգի 5-րդ կետով սահմանված ուղղություններին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում ծրագիր-առաջարկություն, որի հիման վրա հետագայում իրականացվում է ֆինանսական միջոցների օգտագործումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ